Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԻԿԱՐ

(Պատմվածք)

Կայարանին շատ մոտ կատարվող գնացքի այդ խորտակումից հետո ուսուցիչ Վահանյանն ինձ հետ էր մինչև ձորագլուխ բարձրանալը:

Այնտեղից նա թողեց ինձ, դեպի մեծ անտառները գնաց, և որքան գիտեմ, այնուհետև այլևս ո՛չ ոք չտեսավ նրան:

Նրանց, որոնք հետաքրքրվում են և Վահանյանի կյանքի այդ մասը լավ չեն իմանում, ես կհաղորդեմ այն, ինչ ինձ հայտնի է:

Ա

Գնացքը շատ էլ չէր խորտակվել: Առաջի երկու վագոնները միայն ջարդվեցին: Կառաշարը դուրս նետվեց գծից և պառկեց փափուկ հողաթմբի լանջին:

Ճանապարհորդներն իրար վրա թափվեցին, շատ ճիչ ու աղաղակ բարձրացրին, չնչին վերքեր ստացան, մի քանիսի ոտքն ու ձեռքը ջարդվեց, մեքենավարը գլորվեց երեք քայլ հեռու թավալող գետակի մեջ, բայց վերջապես ամենքն ուրախ էին, որ ո՛չ ծանր վիրավոր եղավ, ո՛չ էլ սպանված:

Ես էլ բավական վախեցա: Պառկել էի, հանկարծ շուռ եկա և գլուխս ամուր խփեցի վագոնի պատին:

Բարեբախտություն էր, որ այդքանով ազատվեցի: Ուսուցիչ Վահանյանը նույնպես այդ վագոնի մեջն էր: Թիֆլիսի կայարանումն էինք իրար հանդիպել: Գնում էր ոտքով զբոսնելու գյուղերը և անտառները:

Ըստ երևույթին նա էլ չէր վնասվել: Երբ ամենքս վագոնից դուրս եկանք, տեսա, որ օգնում էր սրան-նրան, մանավանդ մանուկների:

Շալակեցինք ունեցածներս և ոտքով կայարան գնացինք: Պետք էր երկա՛ր սպասել, մինչև նոր կառաշար բերել տային:

Կայարանում սենյակներ կային. կար նաև խանութ: Պատսպարվեցին ամենքը:

Ներս չմտանք մենք: Մի թեթև պայուսակ ես ունեի, Վահանյանը՝ իր վերարկուն:

Ելանք երկաթուղու դարավանդի վրա ու նստեցինք:

Լույսն արդեն բացվել էր: Թեև ձորի երկու ծայրերը դեռ քողավորված էին մառախուղով, սակայն հատակը պարզ էր, և պղտոր գետակը երևում էր ցածում: Դիմացի կողի վրա և հեռուն գտնվող խրճիթների խորքերից լսվում էին աքաղաղի խռպոտ կանչեր, կովի բառաչներ: Մշուշի միջից հապճեպով դուրս էին նետվում գյուղացիներ և արկածի տեղը վազում. թացության մեջ ճղփացող գետինը դրոշմած էր պահում նրանց ոտքերի հետքերը: Բաց էին տանիքները, ժայռ, ծառ և խոտ: Թեթևակի անձրևել էր գիշերը:

Չնայելով ձորամիջի մռայլ տեսքին, արևը ոսկեզօծում էր արդեն հովիտը եզերող բարձրաբերձ ու կնճռոտ կատարները: Մոխրագույն մառախուղը բարձրանում, կաթնագույն քողի նման լուծվում էր հետզհետե և թավալում ապառաժոտ լանջերն ի վեր: Մացառոտ կողերի արահետների վրա հայտնվում էին գորշ վերարկուներով գյուղացիներ, մի եզ կամ մի բեռնավորված էշ առաջնին:

Չէինք խոսում. նայում էինք վեր, դիմացը, բարձր լեռնադաշտի եզերքներին, ուր շարժվում էին սև կետեր և տեղից հասնում էին անորոշ, խուլ աղաղակներ:

Արևը ողողել էր նրա մեն-մի ցցունքը. ոչխարները կայտռում էին կանաչության մեջ, գահավանդի ծայրին մեկ-մեկ երևում էր մի այծ, կամ մռութը դեպի ձորը՝ բառաչում էր մի կով և նրա ձգված, խուլ ձայնը երերուն՝ իջնում, խառնվում էր գետակի շշուկին:

Իսկ թռչունն՝ը, այս-այն կողմ սլացող նրանց աշխույժ դայլայլն ու ճռվողյունները, որոնք միմյանց ներդաշնակելով՝ հնչում էին ծառերի վրա, ժայռերի մեջ…

Ամեն ինչ ժպտում էր այնտեղ, զվա՛րթ էր, կենսունակ: Արևի ոսկեգույն լույսը և ջերմությունը եռանդ էին ներշնչում բույսի, ծառի, նույնիսկ կնճռոտ ապառաժների: Գոլորշարձակ մարգերը փողփողում էին դարաստաններին, մանրիկ առվակներն արծաթե օձերի նման գալարվում էին մացառների միջով, ապառաժների վրա կարմիր ու դեղին ծաղիկները ցողի ջինջ կաթիլներ էին ցնցուղում…

Հմայիչ էր, կենսալից այդ անկյունը: Դալար և ծիծաղկոտ այն բարձր կատարներն ելնելու տենչանքը համակում էր մարդու:

Հիրավի, ինչպիսի՜ հաճույք՝ գնալ մագլցել այդ ապառաժներն ի վեր, թավիշ կանաչության, ծիծաղախիտ արևի ողողման մեջ՝ հասնել կուտակ ժայռերին, ցցվել նրանց գագաթների վրա, նայել այնտեղից անդունդի հատակում գալարվող գետակին և պահ մի զգալ, որ հեռո՛ւ ես առօրյա վշտերից ու հոգսերից, հեռու՝ ներքևում տիրապետող ամե՛ն գծուծությունից, մանր հաշիվներից…

Բ

Երկուսս էլ շուռ եկանք և իրար նայեցինք: Հասկացել էինք: Երկուսիս մեջ էլ ծնել էր այնտեղ գնալու տենչը. նույն զգացմունքն էր համակել երկուսիս:

— Որքա՜ն լավ է այնտեղ,— խոսեցի ես:

Վահանյանը ելավ, ծալեց վերարկուն, նետեց ուսին, ակնարկեց սարահարթին և ասաց.

— Գնա՛նք:

Վարանեցի: Մի ամբողջ կայարան ունեի մինչև իմ ամառանոցի տեղը: Երկար պտույտ կլիներ այդ կողմով գնալը:

Բայց համոզեց ու գնացինք:

Առաջ անցավ: Նկատեցի, որ նրա մշտապես, սովորաբար մռայլ ու անժպիտ դեմքը մի տեսակ կենդանություն ստացավ: Դժգույն այտերը կարծես գունավորվեցին:

Մի ոստյունով անցավ երկաթուղու գծից ու եռանդուն քայլերով գնաց դեպի լանջերն ելնող արահետը:

— Բարձրանում ենք,— ասաց նա,— հոգիս ճնշվում էր այս մռայլ խորության մեջ, շո՛ւտ, դեպի արևը…

Երբ բավական ելել էինք և ընկել գյուղացիների սովորական շավիղի վրա, ընտրեց մի ժայռ ու նստեց: Արևը դեռ չէր հասել մեզ, բայց իջնում էր: Կայարանը մնացել էր խորքում. երևում էր, թե ինչպես մտնում-ելնում էին այնտեղ, գալիս էին դեպի նա գյուղացիներ բեռնավորված: Արկածի տեղից կրում էին ծանր բեռները:

Մեր մոտով անցավ մի գյուղացի: Երիտասարդ էր: Ուսին պայուսակ, ձեռքին ցուպ:

Զվարթ, առույգ և աշխույժ դեմքը մեզ դարձրեց, պահ մի զննեց հետաքրքրվող աչքերով, հետո բարևեց ու անցավ:

Ակամայից՝ հաճույքով հետևեցի նրա լայն թիկունքին, հաղթանդամ մարմնին: Այնպես քայլեր էր դնում, որ գետինը կարծես դողալիս լիներ:

Նույնպես ակամայից ակնարկս դարձավ Վահանյանի նիհար կազմվածքին ու դժգույն դեմքին:

Ինչպիսի՜ խորշոմներ էին այն, որ մթության մեջ չէի նշմարել երեկ և այդ առավոտ: Մաշված, ծյուրված դեմքը ծալծլվել էր սկսում կարծես՝ հին մագաղաթի նման. այդ դեռևս երիտասարդ թշվառը, որ 40 տարեկան չկար, նմանում էր 50-ից անց ծերունու:

Վշտալից ակոսները ճակատի վրա հարթություն չէին թողել. ներքևի շրթունքը իջել, գրեթե մանիշակագույն դարձել՝ ցնցվում էր հաճախ, ինչպես և դողում էին դեմքի մկանունքները:

Ի՜նչ համեմատություն անցնող գյուղացու և Վահանյանի, նույնիսկ իմ կազմվածքների միջև: Մենք նման էինք ծառի այն պտուղին, որ ճյուղի վրա իսկ թառամած է, անհյութ է և անգույն, որ թեթև արկածի է միայն մնացել պոկվել-վար ընկնելու համար: Իսկ գյուղացի՜ն: Առույգ, հյութալից և ծիրանագույն, վայելում է բնությունը իր բոլո՛ր էությունով, իր ամբողջ թափով…

— Ո՛չ,— խոսեց հանկարծ Վահանյանը,— դու խնդրին միայն մի կողմից ես նայում... Գիտեմ ինչ էիր մտածում: Եվ ես մի րոպե այդ համեմատությունն արի ու սոսկացի: Բայց մի՛ շտապիլ, ստոր, մանր, երբեմն շա՛տ ավելի աղտոտ է դրանց, այդ առողջ մարդկանց կյանքը... Ջանազանությունը նրանումն է, որ միտքը չի՛ գործում այնտեղ՝ դատելու և դառնալու համար:

— Նրանք սովոր են այդպիսի կյանքի,— ավելացրի ես:— Մե՛նք էլ ենք վարժվում:

— Նույնպե՛ս, անշո՛ւշտ: Մենք՝ ես և դու, անբնական բաներ ենք, արտառոց, ո՛չ սովորական... Մենք ստեղծված ենք բացառությունների համար և ո՛չ թե օրենքների... դրա համար էլ ամեն վիշտ, տանջանք, հալածանք կամ հակակրություն մեզ վրա ազդում է հարյուրապատի՛կ ավելի ուժգնությամբ: Վշտերը մեզ քամո՛ւմ են, մեր թևերը անխնա, պարբերաբար կտրտում... Բայց վե՛ր կաց, դեպի արևը, դեպի արև՛ը…

Ու ելանք, քայլեցինք: Նա առջևից, ես հետևից:

Գնում էի և մտքովս պատկերացնում Վահանյանի ամբողջ անցյալը: Գիտեի: Թե՛ ականատես էի եղել և թե հենց ինքն էր պատմել ինձ զանազան ժամանակներում: Տեսել էի, թե ինչպես տանջել էին այդ մարդուն, ինչպե՛ս ենթարկվել էր նա անվերջ հալածանքների, հետապնդումների:

Վիշտն ու անհասկանալի դառնալու տանջանքները նրա բաժինն էին եղել այն օրվանից, երբ ոտք էր կոխել ուսուցչական ասպարեզը:

Քսաներե՛ք տարի այդպես: Միակ մեծ սխալն ու հանցանքը հենց դա էր եղել —դառնալ հայ ուսուցիչ, հայ գործիչ. այսինքն նշավակ ամե՛ն վատազգի հարձակման, առավոտը շուտով տեղից վեր կացո՛ղ արհամարհանքի:

Վաղո՛ւց, շատ վաղուց էր սկսել այդ ամենը: Վարժվել էր դրության հետ: Հաշտվել էր այն մտքին, որ ուրիշ սպասելիք չպիտի ունենար կյանքից: Զախողակ էր ծնել: Անբա՛խտ մարդ էր:

Թշվառությունը նրանումն էր, որ ո՛չ մի կերպ հարմարվել չէր կարողանում շրջապատող մթնոլորտին, կյանքին, մանավանդ՝ հասկացողություններին: Հիրավի, եղել էր բացառությունների մարդ և ո՛չ թե օրենքների: Ու օրենքները քամել, հյութ չէին թողել նրա մեջ:

Չկարողանալով հաշտվել շրջապատող կյանքին, նրա ամբողջ կյանքը հետևապես եղել էր, միջավայրի հասկացողությունների համեմատ, սխալների մի շարք: Չէ՛ր ունեցել գրավիչ, սիրելի դառնալու, գոնե մի հատ հաջողություն իսկ ունենալու հատկություններից մեկն ու մեկը: Ընդհակառակը, ուներ իր դեմ գրգռելու, հակակրելի դառնալու բավական շատ հատկություններ:

Վերջերս սակայն, նա հաշտվել էր այդ ամենի հետ, որովհետև զգում էր, որ անզոր էր փոխվելու և կամ շրջապատը փոխելու: Մինչև իսկ փիլիսոփայում էր, ժպիտով էր ընդունում հալածանք, ատելություն, նույնի՛սկ վիրավորանք: Կռվել չէր կարող այդ

հասարակության դեմ. ոչ ուժ ուներ, ո՛չ ընկեր: Փոթորիկնե՛ր, ուրագան բերող մրրիկնե՛ր էին պետք՝ մաքրելու համար Ավգեասի այդ ախոռները:

Զրպարտությունների, ամբաստանությունների դեմ անգամ այլևս չէր պաշտպանվում: Հոգնել էր: Թողնում էր, որ ցեխոտե իրեն ամեն հասնող. միմիայն գլուխն էր վերարկուով ծածկում: Ասպարեզը սրիկայացել էր, հիրավի: Այլանդակություն չկար ուրեմն, եթե սրիկաներն էին այժմ կշռողները, և խեղկատակներ — հասարակական կարգ տնօրինողները:

Մեկ-մեկ, ճշմարիտ է, հիշում եմ, որ վրդովվել էր, երբ անսպասելի կերպով, նույնիսկ իր ընկերակիցներից, ստացել էր վիրավորանք: Եվ կամ, մանավանդ, երբ իր սիրած անձերը «գործնական» խրատ էին տվել նրան՝ մնալ ընդհանուր մակերևույթի վրա, լինել վարվեցող, ապրել ինչպես ամենքը և ոչ թե թռիչքների մասին մտածել և ձողն առած հասարակական նեխած ճահիճը խառնել, գիրացող զեռուններին սարսափեցնել...

Վրդովվել էր, որովհետև իր սիրած անձերը այդքա՛ն իջել էին՝ այդպիսի հորդորներ անելու համար:

Ու զզվանքով, գարշանքով հաճախ մտածել էր թողնել միջավայրը, հեռանալ ընդմիշտ այդ հասարակությունից, չտեսնել ո՛չ մի ծանոթ դեմք, չլսել ո՛չ մի գործի մասին, մոռանա՛լ նույնիսկ, որ նա երբևիցե եղել է ուսուցիչ այդ տեսակ խուժանի:

Այդպե՛ս, նա երբեմն հայտնել էր ինձ իր զայրույթը՝ պարզամտի ուժգնությամբ, իսկ մի քիչ հետո մոռացել էր հալածանքները՝ մանուկի անհիշաչարությամբ:

Տարօրինակ էր թվել ինձ միշտ նաև ա՛յն տեսակետով, որ այլևս ոչինչ լավ բան չէր տեսնում իր շուրջը: Միշտ դառնացած րոպեներով միայն երեխայի պես զվարթ, դարձյալ տխուր ու մռայլ — հաճոյալից կյանքի մասին գաղափար անգամ չուներ:

Նրան չէին սիրում: Մանավանդ տղամարդիկ: Բարեկամ չուներ: Չէ՛ր էլ կարող ունենալ, որովհետև ոչինչ թաքցնել չգիտեր. ո՛չ մտածությունները, ո՛չ արածները, ո՛չ իսկ անելիքները: Եվ որովհետև շողոմարար չէր ու ծածկամիտ — բարեկամ չէր ունենում:

Ու ինչե՛ր ասես, որ չխոսեին նրա մասին:

Քայլում էի նրա ետևից և մեկ-մեկ հիշում բոլորը: Շատերը զուցե մինչև այժմ էլ մտաբերեն: Ասում էին, օրինակ, որ նա խենթ էր, աննորմալ, որ նա վատասերված տիպ էր, խռովիչ, կռվարար, կրքոտ…

Վերլուծել այդ ածականները, գտնել նրանց աղբյուրն ու հեղինակները՝ դժվար չէր: Պետք էր միայն աչքի առաջ բերել նրանց, որոնք գիտեն կաղապարել հասարակական կարծիքները. կաղապարել ու ներկել այնպես, ինչպես իրենց շահերն են պահանջում:

Բայց Վահանյանի համար համառությամբ կրկնում էին նաև, որ սոսկալի Դոն-Ժուան էր, որ ո՛չ մի կին, օրիորդ նրա ուշադրությունից չէր վրիպում: Կնախնդիր էր՝ ամենավտանգավոր տեսակի:

Եվ դա, հիրավի, ինձ միշտ զարմացրել է, որովհետև այդ մարդը չուներ այն գեղեցկությունն ու ճարպիկությունը, չուներ այն շնորհքն ու հաճոյանալու ձևերը, որոնք անհրաժեշտ են այդպիսի դերի համար:

Ասենք ո՞վ գիտե կանանց հոգին. գուցե և վտանգավոր էր հենց նրա համար, որ չուներ այդ ամենը:

Փաստն այն էր, սակայն, որ կանայք համակրում էին նրան: Այդ ի՛սկ պատճառով էլ տղամարդկանց ատելությունն ու զրպարտությունները չափ ու սահման չէին ճանաչում նրա վերաբերությամբ:

Բայց Վահանյանը սիրե՞լ էր և մանավանդ սիրվե՞լ արդյոք — այդ մասին ոչինչ չգիտեմ մինչև այժմ:

Ավելացնենք, սակայն, նրա մասին ասածների վրա և ա՛յն, որ բանիմաց մարդիկ ցինիկ ու անպատկառ էին անվանում նրան. որովհետև, ասում էին՝ «նրա համար գոյություն չուներ ընկերական ո՛չ մի դաշինք, ո՛չ մի օրենք: Նա բացարձակ կերպով իր զզվա՛նքն էր արտահայտում միտքն ու զգացմունքը կաշկանդող որևէ կապի դեմ…»

Որ իր միջավայրի համար Վահանյանը այլանդակություն էր — դա պարզ է: Բայց այլանդակություն, որ ինքն իրեն էր ավելի վնասում. պետք եղածիցը ավելի՛ էր տեսնում ու զգում և չէ՛ր կամենում հօգուտ յուր գործածել այդ ընդունակությունը:

Գրեթե բնազդաբար, հիրավի, բավական լավ թափանցել գիտեր նա իրերի և դիպվածների խորքը. ուներ նաև գուշակելու, հաջող հետևանքներ հանելու սրամտություն: Եթե շահագործեր այդ՝ անշուշտ պիտի հիացներ ամենքին: Եթե հօգուտ յուր շահագործեր և ուրիշների անկման վրա կառուցաներ իր հաջողությունը, անշուշտ ամենքին պիտի պատկառանք ազդեր: Այդպե՛ս էր միջավայրը:

Քի՞չ կային վարպետներ, որոնք համբավ ունեին, վարկ ու պատիվ, վայելում էին հարգանք, հարստություն, գործերի գլո՛ւխ էին կանգնած, ամբոխի սանձը ունեին ձեռքներին…

Այդ ամենը գիտեր, տեսնում էր Վահանյանը:

Հիշում եմ, փորձել էր այդպիսի «վարպետ» ինտելիգենտների դիմակները պատռել, բայց ցեխակույտեր էին նետել նրա վրա, խեղդել էին ձայնը: Աշխատել էր գոռալ՝ խենթ էին հռչակել. ջանացել էր ապացուցանել՝ փաստերը նրա դեմ էին դարձրել ու խեղաթյուրելով ճարպիկությամբ, մինչև իսկ ճակատին էլ զրպարտիչի տիտղոսն էին դրոշմել…

Ու զզվել էր իր անճարակությունից, զզվե՛լ իր տակտիկա ունենալու անընդունակությունից: Զզվել էր, ձեռնթափ եղել, հեռացել էր ամեն գործից, մեկուսացել, կղզիացել…

Ո՛չ հասարակական տեղեր էր հաճախում այլևս, ոչ էլ հասարակության մեջ երևում: Օտարի էր նման, երբ երևում էր մի տեղ:

Եվ մենակ էր այժմ: Մենակ՝ իր երազների, որոնումների ու թռիչքների հետ: Արտաքին աշխարհից կտրվելով հետզհետե ինքն իր մեջ ամփոփված, ապրում էր իր ներքին աշխարհովը միայն:

Օտար, բնակությունից դուրս նետած անձի էր նման, որ անտուն ու անտեղ՝ չգիտե ուր գնալ: Իր ուզած տունը շինելու ուժ չուներ այլևս. հոգնեցրել էին, ջլատել ուժերը ապարդյուն պայքարներով: Ուրիշ հայրենիք որոնելու ելնել — միջոցներ չուներ:

Աստանդական վտարանդի, ձմեռը այս ու այն տեղ՝ դասերի, իսկ ամառը, րոպեից մղված՝ գնում էր թափառելու լեռ ու դաշտ, գյուղ ու ավան. գնում էր, որ երազելու համար հանգիստ տեղ որոնի բնակություններից հեռու. հետո դարձյա՛լ մտնում էր խուժանի մեջ, զայրույթ ու նողկանք կուտակում և նորից ելնում դեպի մենավորությունը՝ խաղացնելու վրդովված հոգին, հանգստացնելու քայքայված ջղերը:

Թվում էր թե դառնալու և հանգստանալու հաջորդական մի մղձավանջ համակել էր Վահանյանին, մի անհրաժեշտ պահանջ վշտակրության, ուժգնացնելու համար թռիչքներն ու ոստումները, տենչալի դարձնելու՝ երազները…

Գ

Ինչպիսի՜ հոգեպարար բավականություն էր այն, երբ սարահարթին հասնելով, մի քիչ հեռու գնացինք, կոշտ սալերի վրա նստեցինք և միմիայն բնությունը տեսանք մեր շուրջը: Բնությունը՝ լայնարձակ, անշրջական, խաղաղ և վսեմ:

Գետնատարած ու գալարուն սև մի երախ հեռվում ցույց էր տալիս ձորի տեղը. ոտքերիս մոտ, ետևում, շուրջներս ամբողջ՝ սփռված էր անհուն տարածություն՝ տեղ-տեղ լերկ ու սպիտակ ցցունքներով: Հորիզոնի վրա դեզ առ դեզ գծվում էին մշուշալից լեռներ, անտառապատ կատարներ. ավելի մոտ պայծառ կարմիր ու դեղին շերտերով բծավորած ընդարձակ դաշտե՛ր էին հաջորդում միմյանց. այս-այն ուղղությամբ փայլում էին կանաչ, զմայլելի տափարակներ ու ալեձև կույտեր, որոնք մագլցում էին գագաթներն ի վեր՝ ամպերի քուլաների նման գողտրիկ ոլորտումներով:

Երկա՜ր մնացինք այդտեղ: Երկա՜ր մեր երազները թափառեցին հեռավոր անտառների, կապույտ գագաթների վրա, դաշտերի և ծաղիկների շուրջը:

Վերջապես Վահանյանը, որ մինչև այդ՝ միայն հատիկ բառերով էր խոսել, կպավ թևիս ու ասաց.

— Նայիր այնտեղ... հեռուն, այդ ամենաբարձր, երկնամերձ կատարին՝ անտառի մեջ... կարծես հսկայական արծիվ լինի, որ, սևաթույր թևերը աջ ու ահյակ, սավառնում է ամպերի տակ…

Այդպես էր. անտառի ընդարձակ կանաչության մեջ այդ ժայռը դուրս էր ցցվել հոխորտ շարժումով ու նրա գիսախռիվ գանգի վրա հեռվից փայլում էր մի բացատ, որ ձյունի նման սպիտակ, սակայն անփայլ, ուրարի պես ձգվում-հասնում էր մինչև անտառի ստորոտը:

— Գնա՛նք այնտեղ,— խոսեց Վահանյանը:

— Ճանապարհից դուրս է:

— Շա՛տ ավելի լավ:

— Ես չեմ կարող. կինս ու աղջիկս սպասում են ինձ:

Հետո, որովհետև անոթացել էի, բացի պայուսակս, հանեցի հաց ու պանիր և սկսեցի ուտել:

— Անոթի չե՞ս:

Մերժեց: Ակնարկը ուղղած իմ ուտելուն՝ սկսեց խոսել:

— Մի՞թե իրավ,— ասաց նա մեղմ,— մի՞թե դու չէիր ցանկալ ելնելու այդ ամենաբարձր կատարին և. . . այնտեղից որոնել ուրի՛շ բարձրություններ: Կանգ առնել սավառնող թևերի վրա, լայնածավալ տարածության կենտրոնին, ձորից ու դաշտերից շա՛տ վեր, քաղաքներից և մարդկանցից հեռու, առօրյա կյանքը ընդմի՛շտ ետ թողած…

— Լավ կլիներ, այո՛:

— Մոռանա՛լ անգամ,— շարունակեց նա՝ ակնարկը տարածության մեջ մոլորուն,— մոռանալ, որ նյութական մարմի՛ն ունիս բուսական կյանքի ձգտող: Անոսրանա՛լ՝ որպես երազ և մտովին սլանալ բարձր, օ՛հ, շա՛տ բարձր, մինչև արև:

— Իկարի նմա՞ն[1]:

— Այո՛— ասաց նա դողալով: Ջղային դող էր այն:— Իկարի նման, թռնել դեպի լույսն ու կրակը:

— Իսկ հետո թևերն այրել ու նորից ցած նետվել՝ վերջնականապես ջախջախվելու համար:

Լռեց քիչ, երազուն աչքերը հեռուն՝ անշարժ մնաց բավական, հետո խուլ ձայնով ասաց.

— Մտային այն թռիչքները, որոնց մոմով կպցրած թևերով են կատարվում, միշտ հալվում ու ոչնչանում են գիտակցության կրակի առաջ:

Հետո ելավ, վերարկուն ուսի վրա ձգեց, ձեռքը պարզեց ինձ ու ավելացրեց.

---

[1] Իկար կամ Իկարիոս, դիցաբանական Հունաստանում որդին էր Դետալիոսի, որը իրեն և որդուն մեղրամոմից թևեր շինեց թռչելու համար, թռչելիս Իկարը հորից ավելի բարձրացավ. արևի ջերմությունից նրա թևերն հալվեցին, և նա թավալգլոր ընկավ ծովը, Սամոս կղզու մոտերը:

— Քո ճանապարհդ այլ է. ցտեսություն:

Եվ գնաց. հաստատուն, բայց հանդարտ քայլերով բռնեց դեպի անտառը ձգվող ուղին ու հեռացավ:

Երկար նայեցի նրա հետևից: Չդարձավ անգամ. ուղիղ գնում էր կատարներին:

Ու երբ հեռու, դաշտերի հորիզոնում միայն շարժուն սև բիծ դարձավ նա — ելա, առի պայուսակս ու քայլեցի դեպի տունս:

Այդ էր իմ վերջին հանդիպումը ուսուցիչ Վահանյանի հետ:

Կմոռանայի անշուշտ ես նրան, ինչպես մոռացել եմ շա՛տ երազողներ և շատ երազներ, սակայն մի օր պոստից ստացա խոշոր կապոց թղթեր և զարմանքով տեսա, որ Վահանյանը ի՛նձ էր ուղարկել իր հուշատետրը:

Թղթերի կտորներ էին, մի հաստ էլ տետրակ: Մատիտով էր գրված, մանր տառեր, անկանոն և դժվար կարդացվող:

Մի նամակ էլ կար:— «Քեզ եմ ուղարկում հուշատետրս,— ասում էր նա,— կարդա և ինչ կուզես արա թղթի վրա անցկացնելուց հետո զգացածներս ու մտածություններս, այլևս ինձ պետք չեն նրանք: Մարդ չկար, որ հետը խոսեի: Եթե լիներ իսկ, գերադասում եմ լուռ, սիրալիր և հանգիստ ականջ դնող թուղթը, քան որևէ իմաստակի ու նախանձոտի թթու դեմքը, չարամիտ հայացքը և հեգնող անամոթությունը»:

Դ

...«Անտառը քաշում էր ինձ. քաշում էին մանավանդ կատարները և նրանց մեջ՝ այն արծվանման ժայռը, որ սպիտակ ուրար ուներ ուսերին:

Համակված ամբողջովին վեր սլանալու երազով, այլևս ոչինչ չէի տեսնում, չէի հիշում. միայն այնտե՛ղ, այնտե՛ղ…

Ու ելա, թողի ընկերոջս և քայլեցի:

Բայց երբ ճանապարհի վրա ելա և արտերի միջով էի գնում, կամաց-կամաց մտավոր սլացումներիս թռիչքներն իջան, մոտեցան գետնին:

Շուրջս նայեցի շփոթված: Ի՞նչ էր այն, ի՞նչ էքստազ էր մղում ինձ ամպերի մոտ, մշուշներից վեր, այդ ի՞նչ ուժ էր, որ մի վսեմ շարժումով ջնջել էր հիշողությունիցս, գոնե միառժամանակվա համար, ներքևում կրածս ահավոր տառապանքներն ու վշտերը, որ երակներիս մեջ էր ներարկել երանավետ աննյութ մի հեղուկ՝ հաշիշի նման արբեցուցիչ:

Եվ ես զգում էի, որ ժպտում եմ: Ժպտում էի հորիզոնին, դաշտերին, կույտ-կույտ կանաչ բլրակներին, գողտրիկ օրորվող արտերին ու նրանց միջից պչրանքներով ողջունող նազելի, ծիծաղկոտ ծաղիկներին…

Սիրտս ուռչում էր հրճվանքից, երանությունը ե՛ռ էր բերում արյունս, և ես ուզում էի ապրե՛լ, շնչե՛լ, վայելել ամենը. որովհետև սիրո՛ւմ եմ ես այդ հրաշակերտը— բնությունը, նրա մե՛ն մի անկյունը, մե՛ն մի շյուղը, նրա շշուկն ու շարժումը, մութ խորշերն ու գաղջ անկյունները անգամ…

Բնության բույրը, բնության շունչն էր այն, որ գրավում էր էությունս, եռանդ էր ներմուծում երակներիս մեջ»…

«Դերբուկներից հետո թումբե՛ր դեմ ելան՝ մացառոտ և խռիվալից կողերով: Ապա անտա՛ռը ծայր առավ:

Սկսում էր դեպի ձորը խոնարհած դալար ծառերի և թփերի խառնուրդով, հետզհետե խտանալով մագլցում էր սարն ի վեր, ալեձև ծալքերի և խորշոմուտ ծործորների մեջ գալարվում էր և խորհրդալից խորշերով սողոսկում էր դեպի ժայռերի գագաթները:

Ո՛չ երկինքն սկսեց տեսնվել այլևս և ո՛չ շրջակայքը: Ծառերի անվերջ շարքեր էին, որ հեռվում մթին զանգվածներ էին դառնում:

Գետինը լպրծուն էր. փտած փայտ ու տերևներով ճղփացող շերտեր էին սահում ոտքերիս տակ, քայլերս ծանրանում էին, հետագնաց մղումներով դժվարացնում:

Սակայն ես գնում էի, ելնում՝ կառչելով արմատների, ճյուղերի, թփերի: Երբեմն, հևիհև ընթանալուց հետո, պահ մի նստում էի մի կոճղի վրա, կռթնում կնճռոտ մի կաղնու բունին և դիտում խտացող անտառը:

Բարձրաբերձ ծառեր էին այլևս: Ստվար, ընդարձակ մի տարածություն՝ ցցված, երերուն հսկաների, որոնք ոտներով մխրճվել էին խոտ ու թփի մեջ, իսկ թավոտ գլուխներովը վերևում աղմկալից համբույրներ էին բաշխում իրար: Ու սաղարթներն այն ճկուն, ամանակավոր, ներդաշնակ օրորումով հնչեցնում էին անտառային մեղմ, անպաճույճ նվագը:

Լսե՞լ ես դու երբեք այդ խորունկ խաղերի միալար թրթռումները, որ բնության երազանքն է արտահայտում այնքան խորհրդավոր ու վսեմ:

Ականջ էին դնում անհագ զմայլանքով նրա աճեցուն ելևէջներին, որոնք մեռնող մրմունջից խուլ մռնչյունի էին հասնում. հետո, ոլորտուն, հապճեպով իջնում՝ մղում՝ քշում էին խազերին դեպի ծառերի խորքերը, հալեցնում մթության ծալքերի տակ:

Ու միալար ներդաշնակության հրապույրովը հմայված, երազներից— երազ արշավելով՝ սլանում էր միտքս մի հեռավոր աշխարհ, մի երանավետ նոր բարձրություն: Չկային այլևս ոչինչ ներքևից, ոչի՛նչ այս աշխարհային-մոգական մի մի մեղմ լույսի տակ, զվարթորեն թռչկոտում էին այնտեղ թիթեռային թափանցիկ թևերով՝ գողտրի՛կ, գեղատեսիլ գլուխներ, և ես զմայլած, վախենալով կորցնել այդ տեսիլը, շունչս բռնած՝ վայելում էի մեծ հաճույքը»:

Որքա՜ն անուշ, որքա՜ն հոգեպարար են այդ երազանքները բարձրերի թռչող գլուխների, այդ բուռն տենչը անոսր կատարների և այդ ձգտումը՝ միշտ ելնելու, մագլցելու դեպի վե՜ր, վե՜ր…

Ինչո՞ւ միշտ դեպի վեր գնալու մղումը, երազների մեջ անգամ թռնելու հաճույքը, աննկարագրելի հրճվանքը համակում է մեզ, երբ սավառնում ենք բարձր, կարծես ազատված մեր մարմնի ծանրությունից, ազատված ստամոքսի ահավոր կշռից:

Եվ գիշերային անուրջներից ա՛յն րոպեներն են քաղցր ու ցանկալի հիշողություններ թողնում, երբ հաջողվում է մեզ ունենալ և տալ մեր մարմնին ցանկալի արագություն ու սլանալ գետնից բարձր:

Թռչուններին նախանձո՛ւմ ենք մենք և առանց հուզմունքի չե՛նք կարողանում տեսնել, թե ինչպես կտրում են նրանք օդը, նետվում առաջ, թևերը թափահարում և գնում սավառնելու խաղաղ բարձրության շերտերի մեջ:

Ինչո՞ւ առանց տենչանքի դողովը բռնվելու՝ մարդ չի կարող նայել որևէ բարձրության, այնտեղ ելնելու տենչանքի դողովը: Ի՞նչն է այն մղող մեծ ուժը, որ հոգնածության, մեղկության հաղթահարելով՝ տանում է մարդուն մագլցելու կատարները՝ թեկուզ կյանքի գնովը:

Քի՞չ են եղել այնպիսիները, կյանքի հետ լա՛վ, ամո՛ւր կապված մարդիկ, որոնք գնացել են իրենց մահը գտնելու կատարների վրա, սառույցների մեջ են մնացել, ժայռերի դեմ ջախջախվել: Սակայն նրանց օրինակը ոչ միայն խրատական չէ եղել, այլ նույնիսկ ձգողական է դարձել, գրավել ավելի՛ շատերի:

Ի՞նչն է, որ թիթեռին մղում է դեպի կրակը թևերն այրել — մեռնելու գնովը:

Բարձրություն, կատար ու գագաթ, մտավոր թռիչք և անոսր օդ ունենալու վսեմ ձգտումը մարդկանց բուռն տենչանքն է եղել ամե՛ն ժամանակ:

Իդեալ է եղել այդ գաղափարը: Ունեցել է իր խորհրդանշանը, իր զրույցներն ու օրինակները: Այդպես է. «Մարդկությունն առաջ է եկել սողալով, բայց կվերջացնի թռնելով»:

Փոքր մի ևս՝ և նա կթռնի: Նա կունենա՝ միշտ բարձր ելնելու տենչանքը, բայց նա այլևս իր թևերը մարմնին չի՛ կպցնիլ մեղրամոմով, որպեսզի սլացումից առաջացող ջերմությունը հալեցնե նրանց: Նա Իկար կդառնա, բայց ավելի խելահաս և ավելի հեռատե՛ս Իկար…

Եվ ե՛ս ուզեցի հասնել իմ տեսած ամենաբարձր կետին, այնտեղից ձգտելու համար ավելի՛ բարձր կետերի:

Լա՛վ է, շա՛տ լավ, երբ մարդ մի՛շտ ունի իր ձգտումների առաջ մի ամենաբարձր կետ, որին բուռն տենչանքով ջանա հասնել և դեպի որը ելնելու համար գոյություն ունենան դժվարություններ:

«Լա՛վ է, երբ կա մի բարձրություն, որին դյուրին չէ հասնել և որին ամենքը չե՛ն կարող հասնել»:

Քայլեցի: Երիտասարդ չեմ. հոգնած, վշտաբեկ, թռնելու համար թևերս ներքևի ծանր օդի մեջ անօգուտ թափահարելուց թուլացած, ծնկներս տկար, կթոտած, լպրծուն գետնի վրայից քարշ գալով, մացառների դեմ արյունոտվելով. մկանունքներս ձգած գնում էի դեպի իմ արծիվը: Այնտեղ էի ուզում, նրա ճերմակ գագաթի, գիսախռիվ գանգի վրա:

Կհասնեի՞ արդյոք: Դողում էին ոտներս, բայց ետ դառնալ, իջնել անգամ մտքովս չէր անցնում:

Պոկեցի կաղնուց մի գավազան, նեցուկ շինեցի ինձ ու գնացի:

Գնում էի և քաջալերում ինձ, սիրտ տալիս, հոգնածությանս ու թուլությանս մտրակում այս մտածությամբ և համոզմունքով, թե այո, բարձրանալը մարդուս մեծ ձգտումներից մեկն է, որ ծնում է մտքի զարգացողության, հառաջադիմության թափիցը: Տգետ մարդը միշտ վախենում է բարձրությունից: Կան «զարգացած», գոնե ուսած մտքեր ևս այդպես: Սակայն այդ մտքերը ուսել են միայն ստամոքսը պարարելու, հեշտակյաց կյանք ստեղծելու նպատակով:

Բարձրի ձգտող մարդը չի կարող գիրանալ: Ցած տեղերն ու բուսական տափարակներն են պարարտացնում... Տիղմ ու փոսեր — ահա գիրանալու գաղտնիքը: Խրոխտ կերպով դեպի վեր, սովորական մակերևույթից ավելի բարձր նետվող միտքը չի կարող ստամոքս ու մարմինը պարարել: Փորը մեծանում է միշտ ի վնաս ուղեղի. ստամոքսը՝ ի վնաս մտքի:

… Դատարկ, դատարկ և ուռուցիկ փիլիսոփայություններ:

Չէ՞ որ առանց ուտելու ո՛չ ապրել կարելի է, ո՛չ մտածել, ո՛չ թռիչքներ ունենալ և ո՛չ էլ ձգտումներ:

Ուտել, ուտել: Ստամոքսն է միայն շարժիչը, առանց նրան — ոչ մի թռիչք: Ու նա, ստամոքսը, ժպտում է հեգնորեն, երբ դու արհամարհում ես նրան:

Թռնել, բարձրանալ... բայց չէ՞ որ ստամոքսը իր ամբողջ հսկայական ծանրությունովը դեպի ցած է քաշում քեզ, գետնաքարշ պահում: Եթե երբևիցե մեկին էլ հաջողվում է տանել իր հետ այդ ստամոքսը դեպի վեր — շատ շուտով ջախջախվում են նրա թևերը և փշրվում ներքևի ժայռերի վրա…

Ու ես կանգ էի առել, նստել գետնին: Անոթի էի: Խոսում էր ստամոքսը: Մի չնչին ցնցումով նետել էր ցած իմ բարձունքներից, հանել էր իմ երազներից:

Այո, անոթի էի, ուտել էի ուզում:

Սոսկումով ուշքի եկա և տեսա, որ ոչ միայն ուտելու ոչինչ չունիմ, այլև բնակություններից շատ հեռու եմ, անտառի խորքը, ճանապարհից դուրս:

Եվ երբ այդ էլ գիտակցեցի, անոթությունս ավելի սաստկացավ:

Ահ, շատ բարձր էի թռել, այո, և ահա արևը հալցրել էր իմ մոմով կպցրած թևերս. ընկնում էի, գլորվում վար, գլորվում սաստիկ արագությունով:

Ուտելու բան, գոնե բուսեղեն, պտուղ: Բայց ոչ արմատներ էի ճանաչում, կամ որևէ ուտելու բանջար, և ոչ էլ պտուղի նշույլ էր երևում անտառի մեջ: Վայրենի, անպտուղ ծառեր էին միայն:

Շուրջս նայեցի, կռացա դեպի գետին, մտադրեցի ճանաչել ուտելու մի բույս: Իզուր էի նայում, որովհետև ոչ մեկը փույթ չէի արել ճանաչելու: Ոչինչ չգտա:

Եվ անոթության գիտակցությունը շեշտվում էր իմ մեջ ահավոր արագությունով, ետ էր մղում, մոռացնել տալիս ամեն ինչ, քանի չէի գտնում ուտելիք:

Ո՛չ անտառի հրապույրն ու նվագը, ո՛չ ժայռերն ու բարձրությունները, ո՛չ երազներն ու թռիչքն էին այլևս աչքիս գալիս: Նսեմանում էին նրանք բոլորն էլ հետզհետե ցավալի արագությամբ. աղոտանում էր ամեն այլ փափագ, և ես մտովին տխրությամբ տեսնում էի նրանց անհետանալը:

Իսկ դրանց փոխարեն անոթությունը հրեշավոր մեծություն ստացած իր ճիրանները մղում էր մարմնիս մեջ՝ երակներիս միջի արյունն էր սառեցնում...

Ահ, ուտել, ուտել, միմիայն ուտել…

Ոտքի ելա, պահ մի վճռեցի իջնել: Իջնելը միշտ հեշտ է և արագ է կատարվում: Կսահեի ցած, կգնայի դեպի մի գյուղ, դրամ կար, հաց կուզեի, մի կտոր ուտելու բան:

Բայց վեր նայեցի և ծառերի միջից նշմարեցի երկնքի կապտությունը: Ուրեմն քիչ հետո արծվանման ժայռի վրա պիտի լինեի: Միայն մի քանի րոպե, մի տասնհինգ րոպեի վերելք: Մի՞թե չէի կարող դիմանալ:

Այո, սակայն գնալ և չնստել այնտեղ, ինչ միտք ուներ: Եվ ահա մի երկու ժամ անոթի:

Ստամոքսը սկսում էր բողոքել, անոթությունս սաստկանում էր, էությունս ամբողջ համակում, զզվելի էին դառնում անտառ, վերելք, ժայռ ու արծիվ:

Եվ ես զզվելի էի դառնում:

Որոնեցի անտառային տանձ, խնձոր: Մտածեցի թե արքայամորի կարող էր լինել:

Չկար, ոչինչ չկար: Քաղցը նստում էր ուսերիս, շուռ էր տալիս դեմքս դեպի ներքև և մղում էր դեպի ցած:

Այլևս չէի կարողանում դիմանալ: Ժայռ, բարձրություն, թռիչք... ջնջվում էին հիշողությունիցս, այժմ դեպի վար, միայն դեպի վար, որովհետև այնտեղ կլիներ ուտելու բան…

Չգիտեմ ով էր այն, ինչն էր — բռնահարեց ուսս, մղեց դեպի ցած, սահեցրեց-տարավ մինչև դերբուկները և դրավ անտառային ճանապարհի վրա:

Միայն մեկ անգամ ետ նայեցի դեպի ծառերի զանգվածը, ճնշված սրտով տեսա արծվանման բարձրությունը, աչքերիս առաջ շողաց նրա սպիտակ ուրարը... Հետո քշեցի ինձ դեպի ներքև, ու ես իջա, գլորվեցի, գնացի կերակուր որոնելու:

Երբեք այդքան քաղց չէի զգացել: Հայհոյում էի ինձ, մտովին թքում ինձ վրա, անիծում թուլությունս, բայց գնում էի ուտելիք փնտրելու:

Եվ քանի նախատում էի ինձ, այնքան ավելի անոթությունս ավելանում էր, գրավում ամբողջ ուժերս, մտածություններս, էությունս…

Մի կտոր, միայն մի կտոր բան, ես դարձյալ կբարձրարանայի, ահ, կգնայի դեպի արծիվը, կարյունոտեի ոտներս, ձեռքերս, ծնկներիս վրա կմագլցեի դեպի վեր, մինչև վերջին շունչս կընթանայի... միայն մի կտոր ուտելու բան:

Լռեցրեք ստամոքսին, այս սոսկալի բռնավորին, թխմեցեք նրա կոկորդը, կորզեք մարմնիցս նրա ճիրանները, զատեցեք ուժերս ու մտքերս նրա հրեշավոր ծանրությունից...

Լռեցրեք այդ աստծուն, որ կաշկանդել է միտքս այլևս ոչինչի վրա չմտածելու չափ, թռիչքներս — գետնաքարշ փռվելու անկումով, և որևէ գաղափար միմիայն ուտելը հոգալու համար…

…Ինքնամոռացության մեջ, կիսամեռ, տղմաթաթախ և հազիվ քարշ գալով հասա անտառի ստորոտներում եղած մի խրճիթի:

Ծուխն էի երևի տեսել և գնացել այդ կողմը: Ածխագործ էր: Երևի շատ թույլ էի, որովհետև երբ ուշքի եկա, տեսա, որ պառկել եմ խոտերի վրա և մի սևադեմ մարդ կաթ էր խմեցնում ինձ:

Եվ սկսեցի ուտել: Նողկանք ու զզվանք. տենչանքներս ամբողջովին կենտրոնացած ուտելու վրա, բերանս էի լցնում ինչ որ կար առջևս:

Ուրիշ ոչ մի մտածություն չէր մնացել գլխումս: Ուտելու անասնական հաճույքն էի միայն վայելում: Զգում էի, որ վերակենդանանում եմ, սառած երակներիս մեջ ավյուն է ներարկվում, ուղեղս մթնացող մշուշը ցրվում:

Շուրջս եղածը տեսնում էի այլևս, ըմբռնում էի: Ժպտում էի ածխագործին, շնորհակալություն հայտնում:

— Հեռո՞ւ է գյուղը:

— Ոչ, միայն մի ժամ, դեպի ցած: Ահա ճանապարհը:

Մտքերս պարզվեցին կամաց-կամաց: Ելա, խմեցի ինձ պարզած ջուրը, վճարեցի, առի վերարկուս ու գավազանս և գնացի:

Վեր չնայեցի այլևս: Ոչ անտառին և ոչ արծվանման ժայռին:

Թվում էր, թե անտառն իր շշուկը ծիծաղի էր փոխել, իսկ ժայռը հեգնորեն ինձ էր նայում...

Գլխիկոր և ամոթահար իջա դեպի բնակությունները: Թևերս մեղրամոմով էին կպցրած, գլորվել էի:

Գլորվել եմ, ճշմարիտ է, սակայն չեմ ջարդվել: Եվ քանի ուժ մնացել է դեռ վրաս, վճռում եմ անհետանալ մեր հասարակությունից: Ատում եմ ես այդ հասարակությունը: Ատում եմ նաև ինձ:

Գնում եմ նոր բարձրություններ որոնելու, բարձրություններ, ուր կա ստամոքսի իշխանությունը սահմանափակող ուժ և որտեղից պետք չի լինիլ ներքև սողալ ուտելու համար:

Իսկ եթե կան այդպիսի գագաթներ և կամ ես չեմ հասնիլ նրանց — թող ոչնչանամ և ընդմիշտ ջախջախված անհետանամ...

Այդպես է թելադրում ինձ իմ թռիչքների տենչը:

Այդպես է միայն, որ ուզում եմ ապրել ես գիտենալու, կամ գոնե մեռնել ոստնողներին պատվանդան դառնալու համար...